

ՔԱՏԱՆՈՐ՝ ԱՆՐՈՒԹԻՒՆ  
 Պոչտովոյ կամար  
 Տարեկան 10 Ձր.  
 վեցամսայ 5 »  
 Արտատն խնդիր հու-  
 մար տարեկան 12 »  
 վեցամսայ 6 »  
 կԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԻՒ  
 —)(—  
 Գրութիւնք և յիշատակ  
 —)(—  
 Երեսնամսայ տող 2 ան-  
 րիմ և իւրիկն առ ի սե-  
 րանկանու համար 20 Օլո  
 գնով կըրայ :

# ՇԱՐՋՈՒՄ

Նամակ և գրաւ դրկեց  
 և արտոգրեւեւ հասցիւն  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 R daction du journ l  
 «Charjoun»  
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ОТГОВОРНИКЪ: А. СУКЯСОВЪ.

## ՀԱՅԵՐԵՆԸ ՀԱՅ ՉՏԱՐ

—)(—

Սինչը եւ Աւստրո-Հունգարիոյ ազգերը իրարու գլուխ կը պատուան, իրենց տոհմային լեզուն պահպանելու համար, մինչդեռ Պուրէշի հրեայները՝ մեծ զոհողութիւններ ընել կը պատրաստուին Իսրայէլի թողները հոյակապ դպրոցով մը օժտելու, մեր ուսման հայ եղբայրները արհամարհական ակնարկ մը միայն կը նետեն իրենց մայրենի լեզուին վրայ, առարկելով թէ անպէտք է, առանց ու ե գործնական օգտակարութեան:

Եւ իրենց այս անպատեհ ուսուցումները այնքան բանաւոր կը կարծեն, որ առանց քաջութեամբ, իր ըսածներուն չափը չզիտցող երախայի մը պէս, չեն վարանիր պատասխանելու գլտողութիւններու:

—Հայերէնը ի՞նչ պիտի ընենք. հաց չտար հայերէնը:

Ասիկա չը՞ նմանիր քիչ մը այն խորթ զաւակին, որ իր ծերացած ծնողքը, ակարութեան օրերու մէջ, տունէն դուրս կը վազուէ, հաց չկրնալ ճարելուն համար...

Ինչ որ պիտի ըսէիք այս խորթ զաւակին, նոյնը ըսելու իրաւունք չունինք այսպէս տրամաբանող ուսման հայուն, որ իր մայրենի լեզուին ծայրը հաց կը փնտռէ:

Արդարեւ, այսքան դրականութիւն չափէն աւելի գրացի չէ՞ ամենէն ցած գոհակութեան:

Ի՞նչ, մեր կեանքի ամէն ճիւղերուն, փոքրագոյն ջանքերուն փոխարէն հա՞ց, ապրուստ պիտի փնտռենք. և անձնասիրութիւններու ամենէն անորակելիովը առգորուած՝ պիտի արհամարհանք այն ամէն բաները որոնք որքան ալ աղնիւ ըլլան, մեր գրպանը քանի մը ֆրանք չեն կրնար ուսեցնել:

Եթէ ուսման հայը մարդկային այսպիսի տարրական պարտք մը կատարելու, իր մայրենի լեզուն սորվելու համար ապրուստ, ապագայ կը պահանջէ, ի՞նչ պիտի պահանջէր արգեօք, եթէ իրեն

առաջարկուէր կաթիլ մը արեւն թափել, յաջողցնելու համար զատը հայութեան մեծ ընտանիքին, որուն մէջ մասն ալ ինք կը կազմէ:

Արդարեւ հայերէնը հաց չտար մտրդու. ո՞վ կուրանայ:

Բայց հայերէնը ինչ որ է հայուն համար, նոյնը չէ՞ յունարէնը յոյնին և հրեայերէնը հրեային համար:

Հրեայէ՞ն ալ շահասէր ենք ուրեմն:

Ռուսմանիոյ հրեան, ո՞չ թէ միայն իր ազատագրելու երբայցեանքներ կը խօսի, այլ այնպէս աղմուկ մը կը հանէ, որ ուսմանական քաղաքներու մէջ կարծես թէ արեւը չեշտն է, օդին մէջ յարաշարժ: Ռուսմանացի համբաւաւոր «ցիկան»ը իսկ, շուրթակի երկու եղանակներու մէջ տեղ, իր պապիկական լեզուն կը լսեցնէ: Եւ նոյնը կընէ նաեւ յոյնը. և հայը, միայն հայն է որ իր դարերու սրբութիւնը եւ խոնկը բուրդ «բարի լոյսը» կը մտնայ լեզուներու այդ նուագահանդէսին մէջ:

Անցեալի մէջ ուրիշ օտարախօս հայեր եւս ունէինք. բայց հիմա, միւլթարական է ընել թէ՛ Լեւսարացի ալ, Պրուսացի ալ, Էտարիկէցի ալ մաքուր հայերէն կը խօսին, և կեանքով ու զգացումով լեցուն նոր սերունդներ արտադրած է: Միայն ուսմանացիին են որ չըմբռնէր իր որքան ցաւալի, այնքան ալ ծաղրելի կացութիւնը այդ լեզուական ինչորին մէջ, ամենէն կարեւորը, ուսկէջ կը բխին բոլոր այն միւս յատկութիւնները որոնք ճշմարիտ հայը կրնան կազմել:

Ժամանակը չէ՞ որ Ռուսմանիոյ զանազան կէտերուն վրայ ապրող հարաշատ հայերը ջանքեր ընեն, անդու աշխատին, ուղղութեան բերելու այդ ձախող տըրամաբանութեամբ մտրտածները, զլլտունուն հանելով այդ «հացի» խեղիւրը, որ զլլտաւոր պատճառն է յուսման հայոց վարժարաններուն յետագիմութեան:

Ամեն բանի մէջ «հաց» փըն-

տուել երեւակայելի ամենէն մեծ բարոյական անկումն է, որմէ պէտք է դուրս ելնեն մեր ուսմանահայ սիրելի եղբայրները, աւելի բարձր, աւելի պատուաւոր դիրք մը բռնելու համար հայութեան ամբողջութեան մէջ:

ԳԱՐԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

## ՕՐԸ ՕՐԻՆ

ՏԱՐԵՂԱՐՁ ՄԸ

Տարիներու ընթացքին մէջ շոգորդութեան այնքան մեծ քանակութեամբ հեղեղներ չեն թափուիր աշխարհի մեջ, քան իսրայէլի վրայ, որքան այսօր Թուրքիոյ չորս անկիւններուն մէջ:

Ինքնակալին պահակալութեան տարեկարծն է: Աղօթքի, խոնկի եւ մտղթանքի նու իսլ եւ ցնորական շտապութիւն մըն է որ ամէն կէտերէ կը բխի, կը ծաւալի, եւ որոնց անկեղծութիւնը ի հարկ է ամբոխին ահաբեկ գրութեան նետ ուղիղ կերպով կը համեմատի:

Ի զուր աշխարհ, արարատ կը պրտայ թէ Օսմ. կայսրութիւն ըստածը յետին անխիտանութեան եւ վայրագ ու անկերպարան վարչութեան մը ձեռքը խաղալիք եւ կորստեան վճիռ վրայ արդէն կիսովին ծոած՝ յետին հարուածին կը սպասէ անդառնալի կերպով մէջը գլորելու համար: Ի զուր միլիոնաւոր ժողովուրդներ, հարստահարուած, նօթի եւ թշուառ, փրկութիւն կը պրտան: Պարսպ տեղը ամէն ոք ձանձրութիւն կը ստանանէ ապացուցանելու թէ թուրքը, իրը ճակատագրականապէս անընդունակ ցեղ, բոնութեամբ նստած դրախտանման աշխարհներու վրայ, սեւ դէմաքի վերածած է զանոնք:

Այսօր, Թուրքիոյ բովանդակ մասովը միաբերան է թուելու կատարուած հսկայաքայլ յառաջդիմութիւններ. այն երկաթուղիները, այն խճուղիները, այն դպրոցները, այն հրաշալիքները, վերջապէս այն երեւակայական անխառն երջանկութիւնը որուն մէջ օսմանական ժողովուրդները կը լուսան...

Այս ժողովուրդներէն մէկն ալ հայ ժողովուրդը չէ՞, որ ի թէ ոչ երջանկութեան՝ գէթ... արեան մէջ կը լողայ այնքան տարիներէ ի վեր:

Ինչն էր չպարտիր հայ ժողովուրդը. ընդարձակ գերեզմաններ որոնք հազարաւորներու խոչտանդուած զաւակները կը պարունակեն. անթիւ որբեր, որոնք մեծաւ մասամբ կեղծ մար-

դանքներու ձեռքը կը ստապին. թշուառ հայրենիք մը, որուն աւերակներուն վրայ, դեռ կենդանի մնացողները կը թափառին անսուազ եւ հալածական...

Արդի ինքնակալին շնորհապարտ են, իր հպատակներէն աւելի այն ազգութիւնները որոնց հաճեցաւ իր հայրական հոգածութեամբ կատարելու անկախութիւն շնորհել... անշուշտ ոչ այնքան բարեհաճութեամբ: Պաղատեան աւերակները այնքան բարիք, իրենց երջանկութիւնը կը պարտին արդի ինքնակալին եւ իր արժանի վարչութեան:

Հայաստանը, Կրկէն, Մակեթօնիան եւ որ ի կարգին, նոյն երախտաւորները պիտի դառնան, որովհետեւ փրկութեան հրեշտակը անոնց ալ պիտի կարկատէ իր սակեձոյլ թեւերը:

Այս տարեկարծին առթիւ, հայ ազգը իր վշտակրած սրտին բոլորաւնունովը կը մաղթէ որ այնքան ներողամտ եւ քարասիրտ երկինքը, զեապարելու օրեր թողու մեծագոր ինքնակալին, որպէս զի արժանի ըլլայ իր զործերուն փոխարէն՝ աչքերովը տեսնել հայ յեղափոխութեան յաղթանակը, եւ Հայաստանի փրկութիւնը:

Գ. Ա.

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. Պոչիս, 17 Օգոստոս

Երկկ հողին յանձնեցինք Տ. Ֆինձանձեանի մարմինը: Հանգուցեալը երկար ժամանակէ հետէ կը ստապէր ստամոքսին մէջ պալարի մը հետեւանքով: Ծերմապէս համակիր էր քաղաքիս յառաջդիմական տարբերուն, եւ եթէ հիւանդ չըլլար վերջին ընտրութեանց ժամանակ իր անուն ալ պիտի տեսնուէր թաղական խորհուրդի անդամներու ցանկին մէջ: Յառաջդիմական տարբեր ջերմ ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին ընտանիքին եւ ազգականներուն այս վաղահաս կորուստին համար:

Թաղական Խորհուրդի ընտրութիւնը տակաւին չը վաւերացուցեաւ Ա. Պոչիսի ազգային ի խանութեանց կողմէ անձանթ պատճառներով: Հաւանականաբար զաղտնի դիմումներ կը ըլլան Փ. Պոչիս յետաձգելու համար վաւերացումը որպէս զի հոս ինչ ինչ զաղտնի գործողութիւններ կատարուին: Բայց տարակոյս չը կայ թէ ընտրութիւնը պիտի վաւերացուի վերջապէս, վասն զի այսչափ

բարեկարգ եւ կանոնաւոր ընտրութիւն մը գոյց կատարուած չէր ք. Պոլսի մէջ Փոքրիկ դիտողութիւն մը: Չենք հասկնար թէ ինչու համար ընտրութեան անդեկագիրը Ա. Պոլսի կը զրկուէ: Գոյնակ Պատրիարքարանի: Մեր հինցած զլուսները տակաւին չեն համոզուած թէ ք. Պոլսի արտասահմանի մէջ ըլլալով, չը կրնար Ա. Պոլսի թէմը համարուիլ եւ թէ՛ արտասահմանի բոլոր ընտրութիւնները Պատրիարքարան կը զրկուին վաւերացուելու համար:

Գլորացական խնդիրն ալ կը մնայ իր վիճակին մէջ: Հին դասատուները դադրած են պատասխէ, բայց նորերու վրայ խորհող խի չը կայ: Եթէ ժողովուրդը չուզէ դպրոցը վերստին յանձնել հին դասատուներուն, Հոգաբարձութիւնը հաւանօրէն պիտի փակէ դպրոցը վրէժ լուծած ըլլալու համար: Անհամբեր կըսպանենք նոր թաղական ինքնուրրի ընտրութեան վաւերացումին:

Խնդիրները անհատուած են հոս: Կան երկու ընկերութիւններ. մին՝ Գլորացարքարանը անունով շատոնց սնանկացած, եւ միւսը՝ Գրասիրաց Եղբայրութիւն, անանձնալու վրայ: Գլորացարքարանը ունի փոքր տուն մը, Գրասիրացը ունի բաւական թիւով հինցած գիրքեր: Աստուածները վճած են որ ք. Պոլսի մէջ կանոնաւոր գործ չըլլայ: Մէկ քանի տարի առաջ փոխանակ ընթերցարան մը հաստատուելու, ինչպէս կը փափաքէին քանք, խաղախան—ընթերցարան մը ունեցած են զնոյախաղի սեղանով: Խաղի թուղթերով, որոնց ներկայութեան մէկ անկիւն կծկած էին լսարանը, ընթերցարանը եւ թատրոնին բեմը: Պատկառելի գումար մը այս եղանակ հաստատութեան համար մտնուելէ յետոյ, գոցեցին զայն մնացած գրամի ալ չը կորսնցընելու համար: Վերջերս մէկ քանի յանազգիական երիտասարդներ որք երկու ընկերութեանց ալ

անգամ էին, կը փափաքէին չէնք չընորք ընթերցարան մը ունենալ: Ընկերութեանց մէկը տուն ունէր, միւսը՝ գիրք ունէր. երկուքին միացումով կրնար գոհացում արուիլ ընթերցարանը երիտասարդութեան: Մեծ ճիգերէ յետոյ, կը յաջողին հաւաքել անդամները, բայց իրենց տաղարի կը մերժուի, որպէս զի «Շաքէ» եւ Յեղափոխութիւն չը կրնան չունիլ առնել: Իրենց գաղափարը սա է թէ խօսելու, լսելու եւ կարգալու միջոց տալու չէ երիտասարդութեան: Հայ պատանիներ եւ երիտասարդներ կը թափառին օտար սրճարաններու եւ զբօսատեղիներու մէջ: Միւս կողմէ Գրասիրացի միտքով ձեռացած երիտասարդ վարիչ անդամները կը պարծինան թէ գրած ունին, գիրք ունին, կարողութիւն ունին, բայց վրէժ լուծելու համար յանազգիականներէն, որք դպրոցը բարեկարգելու համար դասատուներուն անկումը պահանջեցին, պիտի խափանեն ամէն բարենպաստ ազգային հաստատութիւն: Այս յետագիւմ ապուշներուն գլուխը կը գտնուի Մարտիկոյի խանութ—թերթի թղթակից—ներկայացուցչը որ ի զուր կայխատի մէկ քանի բաժանորդ գտնել: Ամօթ . . .

Թաղապետական գաղափարներէ առաջնորդուող բաւական թուով երիտասարդներ, զգալով թէ արմատական ճիգ մը պէտք է երիտասարդութիւնը ազատելու համար խաղաբաններէ եւ սրճարաններէ, կարգած է ընկերութիւն մը, որ նպատակ ունի «գարգացնել Հայ երիտասարդութիւնը ընթերցումով, լսարանով, գիշերային վարժարանով եւ մարմնամարզով»: Վարձած են չէնք մը եւ սկըսած են կահաւորել զայն: Մեծ համակրութիւն գտած են եւ կը յուսանք թէ այս ձեռք պիտի ունենանք բաղձացուած հաստատութիւնը: Մեծ ոգևորութիւն կը տրիլ եւ ամէն օր անդամները կաւելնան: Այս «Հայկական ազատ ընթերցարան»ի ըն-

կերութիւնը արժանի է ջերմ համակրութեան: Մեր սրտագին մագթանքները:

Թ. Ղ. Ա. Կ. Ի. Ծ.

Լուսնախ (Կիպրոս), 7 Օգոստոս  
Տեղիս բրաւնոցի գրութիւնը բարեկաւելու փոխարէն՝ ընդհակառակը աւելի սեւ գոյնիով կը ներկայանայ մեր առջև:

Որբանոցին Տնօրէնուհի Տիկ. Ֆլուհարի որդեգիրը—22 տարեկան ըստոր արարած մը—բռնի կերպով համբուրած է երեք գեռահաս որբուհիներ, որոնք յատկապէս կը բնակին Տիկ. Ֆլուհարի մօտ, ընդհանուր որբանոցէն դուրս: Խեղճ աղջիկները այդ սրիկայէն ազատելու համար կը փախչին եւ որբանոցին այրի կանանց մօտ կապատանին: Տիկ. Ֆլուհարը խնդիր փակելու համար բռնի աղջիկները նորէն իր տունը կը բերէ:

Տեսնենք թէ երբ վերջ պիտի տրուի այս խայտառակ կացութեան: Փափաքելի էր որ Անգլիացի բարերարները իրենց ջրած ծախքերուն եւ բարեգործութեան անունը ազարտել չտան, խնամքի այդ փափուկ գործը յանձնելով Տիկ. Ֆլուհարի եւ անոր որդեգիր սրիկայի պէս արարածներու:

Ինչպէս որբերը եւ այրիները, նոյնպէս ալ Կիպրոսի բոլոր հայերը խիստ դժգոհ են այդ Տնօրէնուհիէն եւ շատ գոհ պիտի մնան եթէ որի բարեխիղճ տիկին մը, զէ՛ծ որբերու լեզուն հասկցող անձնաւորութիւն մը անօրէն կարգուի այդ որբանոցին:

Սիլիստր, 18 Օգոստոս

Լսարանի մը հաստատման ծրագրի մասին արդէն գրած էի: Ուրախ եմ հաղորդելու թէ զաւարարը արդէն իրականացաւ եւ անդրանիկ գումարումը տեղի ունեցաւ անցեալ Կիրակի, ընթեր-

ցարանի սրահին մէջ: Գլխաւոր ասեւորանք եղաւ Տ. Ղազարոս Նահապետեան, որ խոր ապաւորութիւն մը թողուց ունկընդիւրներու վրայ, իր հայրենի յիշատակներու յուզիչ պատմութիւնով եւ նկարագրելով Տուրուբերանը եւ Սալնոնը պատմական, բնական, ազգագրական եւ տեղագրական տեսակէտներով:

Խօսեցան նաեւ Տեառք Յարութիւնեան, Ոստանիկեան եւ Շալճեան:

Ուսուցիկայ շարժու ուրիշ անձեր պիտի հրաւիրուին բանախօսելու լսարանին մէջ, որ մնայուն հաստատութիւն մը պիտի ըլլայ, այնքան պատուարեր քաղաքիս հայ երիտասարդութեան:

Չմոռնամ նաեւ յիշել թէ Տ. Յ. Սարգիսեանի առաջարկութեան վրայ, հանգանակութեան մը ձեւնարկուեցաւ, որուն արդիւնքով հայ որբ մը պիտի պահուի Սանապարեան վարժարանի եւ կամ որբանոցի մը մէջ:

Ա. Ա. Կ. Ի. Ծ.

ՃԱՄԲՈՐԴԻ ՅՈՒՇԱՏԵՏԻՅ

—)(—

Մի բաւական պայծառ օր ճաշին նստեցի Բաթում գնացող նար: Մինչեւ երկուց երկուցը պայծառ էր եւ ծովը խաղաղ. այնպէս որ բոլոր ուղեւորները գտնվում էին տախտակամածի վրայ:

Հենց որ մուծին ընկաւ՝ երկինքը ծածկվեց մշուշով. ուղեւորները սկսեցին անհանգստանալ, որովհետեւ գիշերը պէտք է անցնէինք ամենալուսնազաւոր տեղով. ուր շատ նուեք են կործանվել: Օգը չափազանց խոնար էր:

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻՒՆԻ ՅԵՆԱՍԱԿԱՐԱՆԸ (31)

—Ահա, անցեալ օր, ձեզնից մէկի զգեստներէ մէջ թոյն կար կարված խեղճը վերցրել էր բանտում թունաւորվելու համար:

—Հանգիստ եղէք, մօտի՛ք մինիս, պատասխանեցին. մի մի զեպքում թունաւորվեցէք. արամագրութիւն չունեմ, գրաւ համար էլ թոյն չեմ վերցրիլ:

Մի քանի վայրկեանից յետոյ՝ փոխ-հիւպատոսը գիմեց նազիմին. —Է՛հ, մնաք բարով, պարոն նախարար, յանձնու՛մ եմ ձեզ պարոնին, եւ հաւատացած եմ որ նրա հետ կը վարվէք իբր ռուս հարգատիկ հետ: Իմ ձեռքս էլ սեղմեց ու հեռացաւ: —

Ես մնացի իմ թշնամիներէ ձեռքում, ու, մեղքս ինչ թագցնեմ, մի քանի վայրկեան ճնշվեցի իմ այդ վիճակից: Ընկալ մտատանջութեան մէջ, ի հարկէ մտքերս բոլորն էլ սեւ սեւ էին. աչնան խաւար գիշերից աւելի սեւ ու ճնշող:

Վերջապէս ինձ դուրս տարան եւ մի քանի ժանդարներէ ու ոստիկաններէ յանձնելով բանտ ուղարկեցին—խակական բանտ, իհիստիսի—գեռ հին Բիւզանդիոսի բանտարանի ձեռքով շինված բանտ:

Ինձ զրին բանտապետի կրտսեր օգնականի սենեակը: Փոխած կար մի հին, ազտոտ, բանտի հի-

ւանդանոցից բերված, յարգով շինված դռակ, ազտոտ բարձ եւ վերմակ: Սենեակը ցածր էր փոքրիկ ու խոնար. այնտեղ կար, բացի բանտապետի օգնականից, մի ժանդար, մի ոստիկան եւ մի բանտապահ (գարգիւն), այդ երեքն էլ ինձ հսկելու համար էին: Հենց որ ներս մտայ, բոլորն էլ խոտոր խոտոր սկսեցին նայել եւ զննել: Բազում էի. հաց ուղեցի: Բանտապետի աւագ օգնականը յայտնեց—բեզ համար այսօր հաց չը կայ. ուչ էք եկած:

—Բայց ես քաղցած եմ, մի քիչ բարձր ձայնով պատասխանեցի:

Վերջապէս բերին բոքոն, Աստուած հաց համարի. շունը չէր կարող ուտել, եւ արհամարական կերպով գցեցին անկողնիս վրայ:

Հացը ուտել չը կարողացայ, ընկայ անկողնիս վրայ: Իմ պահապանները ձիւնով, խօսում էին եւ աշխատում ինձ խօսեցնել. բայց ես թէ սաճկերէն չը գիտէի եւ թէ արամագրութիւն չունէի:

Տեսան որ ես չեմ խօսում, իրանք սկսեցին խօսել. ակնարկներ անել իմ՝ եւ առհասարակ հայ յեղափոխականների մասին:

Հետեւեալ օրը սուաւօտեան զարթնեցի զխացաւով. սենեակի խոնարութիւնը, մանդալի հոտը, մինչեւ լոյս ինձ հսկող գորղիանի, ժանդարմի եւ ոստիկանի անգին քանակութեամբ այրած ծխախոտի ծու-

խը, շատ վատ էին ազդել ինձ վրայ: Ստոր ջրով լացվեցի. եւ սկսեցի երգել. Ազատ Աստուած երգը: Այդ միջոցին բանտի խորքերից իբր իմ երգի պատասխան լսվեց. Մեր հայրենիքի բոլոր անհրաժեշտ անհրաժեշտ: Երգում էին յեղափոխական գործով ձերբակալված հայ կտորիները, որոնց պահանջ էր ընկել իմ ձերբակալվելը:

Նրանց քաջալերելու համար երգս շարունակեցի աւելի բարձր ձայնով: Սիրաս սկսեց ուրախութեանից թըրթուրել. ուրախանում էի նրա համար՝ որ բանտը ընկած եւ գուցէ կախաղանի սպասող հայ ժողովրդի պարզ զաւակները այնքան ներկայում էին հայրենիքի ազատութեան գաղափարին, որ սաճկական բանտում՝ սարսափելի պատիժները աչքերի առջև ունենալով անգամ՝ չէին վնասվել եւ հայրենական ազատութեան իրձերբով չի երգն էին երգում:

Բոլորովին զւարթացայ. տխուր մտածումները միանգամից թափու եւ հեռացան. պարզ հայ եղբայրներս իրանց երգով ինձ հօգի եւ սիրտ տրուին:

Այդպիսի լաւ արամագրութեան մէջ էի, երբ բանտապետն եկաւ. ու հաղորդեց որ պատրաստվեմ գնալու նազիմի մօտ:

Մի քանի ժանդարներով ու ոստիկաններով շրջապատված՝ դուրս բերին ինձ բանտից եւ տարան նախարարական տունը:

Վերջապէս մտանք նազիմի առանձնարանը, այն տեղ էր մի ձեռնարկի օձի աչքերով, բաւական մաքուր եւ ազնուականի դիմագծերով թուրք սա քննիչն էր. Ստգի էֆ. կարծեմ, Մաքսիմովը եւ մի թուրք գրագիր: Մաքսիմովը հաղորդեց որ արցաքննութիւնը սկսվում է, եւ ներկայացրեց ինձ Ստգի էֆին:

Ես տոարկեցի որ երկվանից ըսկսած հաց չեմ կերել. հիմա էլ անկարող եմ առանց մի բան ուտելու պատասխանել. ապա յայտնեցի որ անկողնիս բանտի հիւանդանոցից էր բերված. չափազանց ազտոտ է եւ սարսափելի հոտում է:

Մաքսիմովը խեղճ գիմեց նազիմին, որը այդ միջոցին գտնվում էր իր ընդունարանում:

Նազիմը եկաւ մեզ մօտ, գրեթէ ներողութիւն խնդրելու պէս մի քանի խօսք ստաւ, ապա ինձ յայտնեց որ այս բոլորն էր պատուիրէ որ ծառ բերեն: Իսկոյն մարդ կուղարկէ բանտի գիրկէ կտորին, որ մաքուր անկողնի բերեն եւ կը պատուիրէ որ մաքրութեան եւ կերակրի կողմից իմ բոլոր պահանջները շուտով եւ ճշգրտութեամբ կատարեն:

(Շարունակելի)

այլևս անկարելի էր տախտակա- մածի վրա կենալ . իսկ մարդիկ, աչքի առաջ ունենալով մ'ուշա- պատ գիշերը և վտանգաւոր խու- թերը, այնքան էլ սիրտ և տրա- մադրութիւն չունէին գնալ նա- ւասենեակները :

Մի քանի հոգով նստել էինք ծխելու սենեակում և զրուցում էինք : Խօսողներս էինք գլխաւոր- րապէս մի յոյն վաճառական, մի զինուորական, ևս և կապիտան և ևս :

Յոյնի հետ ծանօթ էի . դեռ երկու տարի առաջ ճամբորդել էինք միասին նոյն ընկերութեան շրջանաւոր և նոյն գծով :

Այս յոյնը հայերին չէր սի- րում, բաւական մեծամիտ էր և իրան ուսու էր ներկայացնում : Միշտ յարձակվում էր հայերիս վրա . դեռ անցեալ անգամ բա- ւական տաք վիճաբանութիւն է- ինք ունեցել և բաւական պալ կերպով բաժանվել իրարից :

Այս անգամ յոյնը իր սանձը բոլորովին կտրել էր . քաջաւեր- վելով ուսու պահպանողական և փողոցային մամուլի բռնած դիր- քից, յենվելով այն փաստի վրա, որ Վուսկառավարութիւնը աղատ ու պարզ կերպով հալածում է ուսաստաններին, կրկին յար- ձակվեց հայերիս վրա և շատ կա- տաղած կերպով : Էլ համբերել չը կարողացայ . նոյն իսկ խոհե- մութեան սահմանից դուրս գա- լով յարձակվեցի թէ ուսու կա- տաւարութեան, թէ թերթերի վրա, իսկ յոյնին խօսք զու պատերեցիք : Յոյնը մի քիչ շա- րեց . ապա առարկեց .

— Պարոն, ինչո՞ւ էք սյդպէս տաքանում, ես խօսում եմ հայ ազգի շարչի և վաշխառու դասա- կարգի մասին և առհասարակ հա- յերի տիրապետելու ձգտման մա- սին . բայց միտք չունէի ամբողջ հայ ժողովուրդին պախարակել :

Միջամտեց ուսու զինուորակա- նը, որը, մինչևե այժմ, գրէթէ լու- թութեամբ լսում էր . իսկ հիմա իր երջնագոյն աչքերը գոհու- թեամբ նախ դէպի իմ կողմը ուղ- ղեց, ապա գառնալով յոյնին ա- սեց .

— Պարոն, ես էլ կարծեցի որ դուք հարաձու՞մ էք մի միայն հայ- կական մի արոջ դասակարգ, և թէ ձեր ասածները ուղղված լինէին ընդհանուր հայութեան, ևս էլ կը վերաւորվէի :

Յոյնը ապշեց և մի քիչ ան- հանգիստ կերպով հարցրեց սպա- յին .

— Մի՞ թէ դուք հայ էք, պարոն կապիտան :

— Ոչ, պատտիսանեց սպան, ես ինքս հայ չեմ, բայց պայտս հայ է եղել, և ես ոչ միայն չեմ ա- մաչում որ հայից եմ սերված, այլ մեծ պատիւ . . . իմ ազգա- նունս Խ. . . . ով է : Պատիւ եմ համարում նրա համար՝ որ սյդ մի բուռն ժողովուրդը դարբերով

կուլ է մղել իրանից շատ զօ- րեղ ազգերի դէմ, հալածվել և հարստահարվել, բայց և այնպէս մինչևե այժմ պահել է իր գոյու- թիւնը : Դեռ երեկ ամբողջ մարդ- կութիւնը նրան ընդունում էր իբր մի շահամուտ ստրուկ, ևս էլ նոյն կարծիքին էի, բայց այսօր այդ արհամարված ստրուկը ցնց- վել է իր կախարհական քնից և ամենապայծառ փաստերով ա- պացուցանում է սր մեծ զղւանք է զգում դէպի իր անպատարեր վիճակը և պատրաստականութիւն ունի դաղափարական ժողովուրդ- լինել, ոչ պակաս քան մի եւրո- պական ազգ :

Ահա հենց այդ փաստերի հիման վրա է որ ես հպարտանո՞ւմ եմ իմ հայից սերված լինելուս համար, և համոզված եմ որ դեռ ինձ նման շատ շատերը կը լինեն, որ երեկ ծածկում էին ոչ միայն հայից սերված լինելը, այլ և իրանց հայ լինելը . բայց այսօր մի ա- ուանձին գոհունանութեամբ ևն յայտնում, որովհետեւ այդ փոք- րիկ ժողովուրդը աղատութիւն է ուղում : Երան հակառակում են աշխարհի ամենազօրեղ պետու- թիւնները և խեղճի գլխին սուր են խաղտցնում ու կրակ թա- փում . այնուամենայնիւ այդ փոք- րակիւ չլիթայակապ ազգը չէ ընկճվում և շարունակում է իր հերոսական, սյո, բոլորովին հե- րոսական մարտը :

Յոյնը և ես շարսւծ նայում էինք այդ ողբերգիւմ ուսու կա- պիտանին, սրբ իր տաք խօսքը վերջացնելուց յետոյ՝ դարձաւ ինձ .

— Էհ, բարեկամս, մի քիչ խը- մենք, ա լա բուս : Ես շատ ուրախ եմ որ առանց քաշվելու պաշտպա- նում էք ձեր հալածված ժողու- վրդին, չը մոռանալով և յնրա վատ կողմերը : Ես դ իտեմար ա- ուա՞ լուս էի, ուզում էի հասկա- նալ թէ ի՞նչ դիրք էք բռնելու ձեր ազգը պախարակող այդ պա- րոնի դիմաց . այս միջոցին սպան միարհամարական հայեացք գցեց դէպի յոյնը .

— Դէ գնանք բուժէտ, չէ ա- ւելի լաւ է այստեղ, խմենք հայ ազգի վերածնութեան համար :

Յոյն վաճառականը դիտում էր այդ տեսարանը լուս ու մուշկ և կծկված : Վերջապէս զգաց որ ինքը աւելորդ էր այնտեղ, սուս ու փուս, թրջված կատուի պէս, գորս սողաց . . .

ՎԱՐԴՈ

Ք Ր Ո Ն Ի Կ

— (—

Պիթիլիսի նահանգին մէջ պա- տահած նոր արիւնհեղութիւննե- րուն համար, Պոսի Ֆրանսական և Ռուսաստանի զեպանները խոր- հրդակցեց ևն միասին : Հաղոր- դուած տեղեկութիւններու հա- մեմատ՝ այդ նահանգին մէջ նախ

ոստիկանները սկսեց ևն անկար- գութիւնները և ապա քուրդերը պակասը լեցուցեց ևն : Դեռ պա- նաս ունեւերուն տուած հեռագիր- ներուն համեմատ, Սուլթանը հրամայեց է Պիթիլիսի նահանգա- պետին հեռանալ (քանի որ իր գործը կատարած է ալ) և անոր տեղը ուրիշ մը նշանակեց է :

Ալ ամէն հայ հանգիստ կրնայ պակսել և սպասել նոր . . . ար- հաւիրքներու :

— «Արեւելք»-ի կր գրեն Արաբ- կիրէն :

« 1 յօր, 2 Օգոստոս, կիրակի, նահանգիս Ամբաստանիչ Ատենին «մէնը մուհարէմէ»-ի վճռով ա- զատ արձակուեցան ինը հայ բանտարկեալներ, որոնք Թաղ- Խորհուրդի անդամակցութեան և ընտրութեան հեռւանք ձեր- քակալուած էին » :

— Ստեփան փաշան, որուն յանձնուած էր Գալֆանիս Որբա- նոցի վերահսկողութիւնը, ինչ- պէս գրած էինք մեր նախորդ թիւին մէջ, այցելած է այդ հաս- տատութիւնը և կարգ մը բարե- նորոգիչ առաջարկութիւններ ներկայացուցած է Պատրիարքին որ օրինաւոր գտնելով, անոնց գործադրութեան հոգն ալ յանձ- նած է նոյն փաշային :

— Ազգ Հիւանդանոցի նորըն- տիր Հողաբարձութիւնը լուրջ կերպով գործի սկսած է : Հիւ- անդարանի և յիմարանոցի բա- ժիններուն համար բժշկական քննութիւն մը սահմանած է, և սյդ պաշտօնը յանձնած է Տօքթ. Վահրամ Թորոզմեանի :

Տօքթ. Խորատունձեան ալ, հա- կառակ իր բաղմազբաղ վիճակին ներկայ կը գտնուի Հողաբարձու- թեան նիստերուն : Հողաբարձու- թիւնը միևնոյն ատեն կը ըզրաղի Որբանոցի բարեկարգութեան, և ընդհանուր կանոնագրի մը պատ- րաստութեան :

Երանի թէ տեւա՞յն ըլլային սկսուած այս եռանդուն աշխա- տութիւնները, և Հիւանդանոցը դադրէր ապականութեանց բոյն մը ըլլալէ :

— Արմաշու Դպրեվանքին 18 աշակերտներէն վեցը յառաջի- կայ կիրակի օր սարկաւազ պիտի ձեռնադրուին, որոնց նուիրելու համար Պատրիարքը իր կողմէն թաւչէ ուրարներ պարաստել տուած է :

Աճեցէք և բազմացարուք . . . :

— Սուլթանի գահակալութեան տարեգարձին առթիւ Պատրիար- քարանը հրաւէր զրկած է Պոլսի եկեղեցականներուն, ասորիճա- նաւորներուն և պաշտօնեայնե- րուն, որպէս զի Մայր եկեղեցի գան և ներկայ ըլլան հանդիտա- յոր բարեմաղթութեան օր պիտի կատարուի անոր թանկագին կե- նացը համար :

Հապա մեր հաղաբարտ նահա- տակներու համար եղած հոգե-

հանգստի ազօթքները որո՞ւ կուղչուին :

— Վերջերս հայ կառապան մը Մալաթիայէն երկու թուրք կին ստած կը տանի Սերաստիա : Թրքուհիներէն մէկը քաղաք հասնելուն պէս կը յայտնէ թէ այդ հայ կառապանը ճամբան փորձած է իր պատուին հետ խողալ : Թուրք ամբօխը հայը լաւ մը տփելէ կողերը փորը լե- ցնելէ ետքը կը յանձնեն կառա- վարութեան որ 15 տարուան բան- տարկութեան կը դատապարտէ լսեղճ հայը :

Աս միջագէպը քիչ է մնացեց ընդհանուր կտորածի մը դուռ բանայ եղեր :

— Ռուսուքէն առնուած մաս- նաւոր նամակներէ կը տեղեկա- նանք թէ՛ հոն հակահոգաբար- ձուական կուսակցութիւնը ձեռ- նարկած է մասնաւոր դպրոցի մը հաստատութեանը :

Արգէն տկար ուժ մը երբ այս- պէս կը շլատուի և կը բաժնուի, կրնանք և բեւեակայել թէ ի՞նչ վի- ճակի կրնայ մատնուիլ ազգ. վար- ժարանը :

Երանի թէ այդ վերջնական քայլը չառած, համաձայնութեան մը գային, և դատախարակութեան գործը չի վնասուէր :

— Աղէքսանդրոպօլի ազգային դպրոցներու և անոնց վերաբե- րած ապահովագրուած կալուած- ներու արժէքը կը հասնի մինչև 200,000 ռուպլի . և ասոնք հե- աղհեաէ կը յանձնուին ուսու կա- տաւարութեան :

— Մեզ հաղորդում են, կը գրէ Մշակ, որ համաձայն բարձ- րագոյն թոյլտուութեան, մի քա- նի դպրոցական վարչութիւններ դանդատ են ներկայացրել ու- սումնարանական իշխանութեան դէմ, հայոց եկեղեցական—ծխա- կան դպրոցների շինութիւնների և դոյքերի վերաբեմամբ » :

— Մեզ հաղորդում են, կը շարունակէ նոյն թերթը, որ Թիֆլիսի նահանգի ժողովրդա- կան դպրոցների վերատեսուչը գիմել է Թիֆլիսի զրավաճառա- նոցներին և առաջարկել . ներ- կայացնել իրանայն դասագրքերի ցուցակը, որոնք գործ էին ած- վում հայոց եկեղեցական—ծխա- կան դպրոցներում :

— Վեհ. Կաթողիկոսի վերջերս նոր-Պայազիտ ուղեւորութեան միջոցին, հակառակ իր պատուէ- րին, նոր-Պայազիտի ջոջերը փառաւոր սեղան մը կը սարքեն իրեն : Կաթողիկոսը չի մասնակ- ցիր սեղանին, և գոհ կը ըլլայ ա- պուրով և մածունով : Ճաշի կէ- սին, երբ ջոջերը առանձին մնա- ցած բաժակ բաժակի վրայ կը պարպեն, Կաթողիկոսը յանկարծ ներս կը մտնէ, և հեգնոտ ժպիւ- պով մը կը կսէ : «Դուք ալ, ինչ- պէս կը տեսնամ, կըսպասէիք թէ մոլոլ կիւարն, պիտի լիլաւ եհեխ» : Ի՞նչ լաւ կը ըլլար, եթէ Կաթո-

